ԳՆԱՀԱՏՄԱՆ ԵՎ ԹԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ

ՀԱՅՈՑ ԼԵԶՈՒ

ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ԿԱՄԱՎՈՐ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԹԵՍՏԻ ՈՒՂԵՑՈՒՅՑ

Թեստը պարունակում է 60 առաջադրանք, որոնցից 45-ը՝ ընտրովի, 15-ը՝ կարճ: Հնարավոր է վաստակել առավելագույնը 60 միավոր: Բովանդակային առումով թեստում առկա են լեզվի 4 հիմնական բաժիններից (հնչյունաբանություն, բառագիտություն, ձևաբանություն, շարահյուսություն), ոճագիտությունից և ընդհանուր գիտելիքներից և՛ գործնական գիտելիքներ ստուգող առաջադրանքներ, և՛ տեսական պնդումներ: Կառուցվածքային առումով առաջադրանքներն ունեն հետևյալ 2 հիմնական տեսակները՝ ընտրովի պատասխանով և կարճ պատասխանով:

Բոլոր առաջադրանքները 1 միավորանոց են:

Ընտրովի պատասխանով առաջադրանքների դեպքում տրվում են պատասխանի 4-ական տարբերակներ, որոնցից միայն մեկն է ճիշտ:

Կարճ պատասխանով առաջադրանքների դեպքում տրվում են 7-ական լեզվական միավորներ, որոնցից պահանջին համապատասխանում են մի քանիսը: Ճիշտ պատասխանների քանակը հարցադրման մեջ չի նշվում: Միավոր է տրվում այն դեպքում, եթե ճիշտ են նշված բոլոր համարները:

ԹԵՍՏԱՅԻՆ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐՈՒՄ ԸՆԴԳՐԿՎՈՂ ՆՅՈՒԹԻ ՄԱՍԻՆ

Բառագիտության վերաբերյալ առաջադրանքները կազմվում են գրականության ցանկում նշված բառարանների հիման վրա, ընդ որում՝

- բառերի՝ միմյանց հոմանիշ (հականիշ) լինել-չլինելը որոշվում է միայն տրված բառի բառահոդվածում համապատասխան հոմանիշի (հականիշի) առկայությամբ կամ բացակայությամբ. միջնորդավորված հոմանշությունը (հականշությունը) հաշվի չի առնվում,
- բառի կազմությունը որոշվում է միայն համաժամանակյա հայեցակետով. բառարմատի՝ արդի հայերենում չգիտակցվող բաղադրիչները հաշվի չեն առնվում, մասնավորապես, Ս. Գալստյանի ‹‹Դպրոցական բառակազմական բառարան››-ում կլոր՝ հետևյալ տիպի՝ () փակագծերում տրվածը համարվում է արմատ՝ անկախ դրա չգիտակցվող բաղադրիչները առանձնացնող գծիկի առկայությունից,
- տե՛ս նշումով, ինչպես տրված է Է. Աղայանի ‹‹Արդի հայերենի բացատրական բառարան››-ի նախաբանում, հղում է արվում ոչ կանոնական, մերժելի ձևերին:

Ոճագիտության վերաբերյալ առաջադրանքներում կարող են ներառվել՝

- հետևյալ ոճական հասկացությունները՝ մակդիր, համեմատություն, անձնավորում, փոխաբերություն, բաղաձայնույթ, չափազանցություն, հանգավորում, շրջադասություն, հակադրություն, բառակրկնություն,
- հետևյալ գործառական ոճերը՝ գիտական, վարչական, գեղարվեստական, հրապարակախոսական:

Ընդհանուր գիտելիքների վերաբերյալ առաջադրանքներում կարող են ներառվել՝

- գրաբարի, միջին հայերենի, արևելահայերենի, արևմտահայերենի տարբերակումը,
- արևմտահայերենի քերականական առանձնահատկությունները:

Առաջադրանքներում չեն ընդգրկվի՝

ուղղագրությունից և ուղղախոսությունից՝

1. ուղղագրական զուգաձևությունները
2. բաղաձայնների և երկհնչյունների արտասանությունը
3. օտար ծագմամբ հասարակ և հատուկ անունների շեշտադրությունը
4. տողադարձը

բառագիտությունից՝

1. մենիմաստ և բազմիմաստ բառերի տարբերակումը
2. նույնարմատ և համահունչ համանունները
3. դիպվածային, կեղծ գրական բառերը, հասարակաբանությունները
4. իսկական և կցական բարդությունների տարբերակումը
5. հապավումները, համառոտագրությունը

ձևաբանությունից՝

1. սեռական հոլովը տրականից (բացի դերանվանական հոլովումից) և հայցականը ուղղականից և տրականից տարբերակումը
2. որակական և հարաբերական ածականների տարբերակումը
3. արգելական հրամայականի զուգաձևությունները
4. երկրորդական բաղադրյալ ժամանակաձևերը
5. վերաբերականների տեսակների տարբերակումը՝ բացի հաստատական, ժխտական, երկբայական, սաստկական, սահմանափակման տեսակներից

շարահյուսությունից՝

1. առդրությունը
2. համասեռ և տարասեռ որոշիչների ճանաչումը, դրանց տարբերակումը և կետադրումը
3. սեռականով որոշչի տարբերակումը հատկացուցչից
4. վերաբերականների տրոհումը՝ բացի հանրահայտ և ակնհայտ դեպքերից
5. կետադրական զուգաձևությունները

ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐԻ ՆՄՈՒՇ-ՕՐԻՆԱԿՆԵՐ

Ընտրովի պատասխանով

Ո՞ր շարքում ուղղագրական սխալ կա:

1) ժպիրի, ծոպ, խապշիկ, բամբ
2) թափք, ոսկեծուփ, ընդհուպ, երփնավառ
3) բրոնզյա, գրաբար, թպրտալ, դարպաս
4) աղբակույտ, արբշիռ, ներբան, սփրթնել

Կարճ պատասխանով 1

Ո՞ր բառերի բացատրությունն է սխալ:

1. գրաստ - բեռներ կրող կենդանի
2. գրամոլ - գրելու հիվանդագին մոլուցք ունեցող անձ
3. ակնարկ - համառոտ արված քննություն՝ նկարագրություն
4. գրչակ - երիտասարդ գրող, ստեղծագործող
5. անկարգել - ջրի հոսքը փակող պատնեշ
6. անօրինակ - նմանը չունեցող
7. երախտագիտություն - երախտիքը իմանալն ու գնահատելը

Կարճ պատասխանով 2

Գրանցել տվյալ բնորոշմանը համապատասխանող նախադասությունների համարները: ***(6 միավոր)***

Համարները գրել առանց բացատների և ստորակետերի:

1. Հունվարի 31-ին Ալեքսանդրապոլում՝ Հայաստանի «երկրորդ մայրաքաղաքում», տեղի ունեցավ Հայաստանի համալսարանի հանդիսավոր բացումը:
2. Երևանից և Թիֆլիսից հատուկ գնացքներով եկել էին բազմաթիվ հյուրեր՝ Խորհրդարանի նախագահ Ավ. Սահակյանը, վարչապետ Ա. Խատիսյանը, բրիտանական ներկայացուցիչ Օ. Ուորդրոպը, կրթության և արվեստի նախարար Ն. Աղբալյանը, բանաստեղծ Հ. Հովհաննիսյանը և պետական ու հասարակական, գրական ու գիտական շատ ուրիշ դեմքեր:
3. Ալեքսանդրապոլի քաղաքային վարչությունը կազմակերպել էր փայլուն ընդունելություն. կայարանում պատրաստված էր թեյասեղան, համալսարանի դահլիճը զարդարված էր կանաչով ու դրոշակներով, նվագում էր զինվորական խումբը:
4. Հանդեսը բացելու համար ձայնը տրվեց համալսարանի տեսուչ, վաստակավոր գիտնական պրոֆ. Ի. Ղամբարյանին, որից հետո նախարար Ն. Աղբալյանը մի ընդարձակ ու կուռ ճառով վեր հանեց համալսարանի դերը հայ պետականության ու մշակույթի զարգացման գործում:
5. - Այն ջահը,- ասաց նա,- որ մենք վառում ենք այսօր Հայաստանի բարձրավանդակի վրա, չի հանգչի երբեք և կլուսավորի Առաջավոր Ասիան:
6. Հանդեսի ամբողջ տևողության ընթացքում դուրսը խռնված էր մեծ բազմություն. շատերը եկել էին շրջակա գյուղերից. հասարակությունը խանդավառ ցույցերով

ընդունեց հանդեսից հետո դուրս եկող հյուրերին:

7. Երեկոյան առևտրական դպրոցի սրահում կայացավ գրական-երաժշտական երեկույթ, այնուհետև տեղի ունեցավ պարահանդես, որ տևեց մինչև ուշ գիշեր:

1. միջոցի խնդիր ունեցող նախադասություն(ներ)
2. բաղադրյալ ստորոգյալ ունեցող նախադասություն(ներ)
3. բացահայտիչ ունեցող նախադասություն(ներ)
4. մեկից ավելի ուղիղ խնդիր ունեցող նախադասություն(ներ)
5. ձևի պարագա ունեցող նախադասություն(ներ)
6. նպատակի պարագա ունեցող նախադասություն(ներ)

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Բուհերի բանասիրական ֆակուլտետների ուսանողների համար երաշխավորված դասագրքերից՝

- Ա. Սուքիասյան, Ք. Սուքիասյան, Մ. Ֆելեքյան Ժամանակակից հայոց լեզու (Հնչյունաբանություն, բառագիտություն), Եր., 2017
- Մ. Ասատրյան, Ժամանակակից հայոց լեզու (Ձևաբանություն), Եր., 2002
- Ս. Գյուլբուդաղյան, Ժամանակակից հայերենի շարահյուսություն (Պարզ
- նախադասություն), Եր., 1988
- Գ. Գարեգինյան, Ժամանակակից հայոց լեզու (Բարդ նախադասություն), Եր., 2002
- Յու. Ավետիսյան, Ժամանակակից հայոց լեզու (Ձևաբանություն)[1], Եր., 2024, 2026 (լրամշակված հրատարակություն)

2. Բառարաններից՝

- Է. Աղայան, Արդի հայերենի բացատրական բառարան[2], Եր., 1976
- Ա. Սուքիասյան, Հայոց լեզվի հոմանիշների բառարան, Եր., 1967
- Ս. Գալստյան, Դպրոցական բառակազմական բառարան, Եր., 2014
- Ա. Սուքիասյան, Ս. Գալստյան, Հայոց լեզվի դարձվածաբանական բառարան, Եր., 1975
- Պ. Բեղիրյան, Հայերեն դարձվածքների ընդարձակ բացատրական բառարան, Եր. 2011
- Յու. Ավետիսյան և այլք, Արդի արևելահայերենի ուսումնական քերականական բառարան, Եր., 2024

Ծանոթություն: Գրականության ցանկում չնշված որևէ այլ աղբյուր չի կարող հիմք ծառայել բովանդակային բողոքարկման համար:

---

[1] Գիրքը բացի հեղինակի տեսակետներից պարունակում է նաև *ՏԵՍԱԿԵՏ* վերնագրով հատվածներ. վերջիններում առկա տարբեր լեզվաբանների այն մտքերը, որոնք տարբերվում են հեղինակի տեսակետներից, առաջադրանքներ կազմելու հիմք չեն համարվում:

[2] Բառարանը հիմք է համարվում բացառապես իմաստաբանության առումով՝ բառի բացատրություն, հոմանշության կամ հականշության հնարավորություն, համանունություն: